



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

*ms. 16.9*

516.9

0-61

2968

Ես մի անգամ լսեցի զբարձրանի զոսի խօսակ-  
ցութիւնը փոքրիկ երեխայի հետ և զրի առայ.

Գիրքն ստում էր երեխային. «Միրելի մանուկ,  
խնդրում եմ ինձ չ՛վերցնես կեղտոտ ձեռքերով, ես  
սաստիկ կամաւ եմ, երբ ուրիշ երեխաներ ինձ մաքուր  
չտեսնեն: Մի Ժող ինձ անձրևի տակ, չէ՞ որ գրքերը  
նոյնպէս փոքրիկ երեխաների նման հեշտութեամբ կը-  
մբահն: Ինձ վրայ չ՛գրես կամ նշան չանես ոչ գրչով  
և ոչ մատիտով, դա շատ սգեղ է: Կարգալիս էլ ար-  
մունակ մի դնիր երեսիս, սաստիկ ցաւեցնում ես. նոյն-  
պէս բաց մի ձգիր ինձ երեսիս վրայ, քեզ էլ դուր չի  
գայ, երբ նոյն ձևով հետզ վարեն ուրիշները:

Թերթերիս մէջ մի դնիր ոչ մատիտ և ոչ էլ որ  
և է հաստ իր՝ բացի բարակ թղթերից, որովհետեւ դը-  
րանից կը փչանայ իմ կազմը:

Եթէ կարդալով վերջացրել ես և վախենում ես  
կարդացած տեղը կորցնել, եղունկներով նշաններ մի  
անիր, այլ պահիր իմ մէջ մի թուղթ կամ գեղեցիկ  
ժապաւէն, ծածկիր ինձ և դիր նախկին տեղս: Մի մո-  
ռանար, որ քեզանից յետոյ ես դեռ շատ երեխաների  
էլ պիտի այցելեմ:

Օգնիր ինձ մնալ մաքուր և գեղեցիկ:

Իսկ ես կ'օգնեմ քեզ լինել երջանիկ:



41

1180

Հոսից 616.9  
№ 9. 61

610  
110-100

Ժողովրդական գրադարան



ԻՆՉՊԵՍ ՊԱՀՊԱՆՈՒԵԼ

**Խ Օ Լ Ե Ր Ա Յ Ի Ց**

1003  
10206

Թարգմանութիւն ռուսերէնից

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊԵԿ



Թ Ի Ֆ Լ Ի Զ

Մովսէս Վարդանէանի Տպարան  
Тифлис, Типог. М. Варданянца, Троиц. пер. д. № 11.

1890

Дозволено цензурою, Тифлисъ, 20 апрѣля 1890 г.

113586 - 42



### Խօլերայի պատմութիւնը:

Խօլերայի բուն երկիրը՝ ծննդավայրը Հնդկաստանի Բենգալիա նահանգի փոքրիկ դաշտավայրն է համարվում, ուր նա մշտապէս գոյութիւն ունի: Միայն դարիս սկզբին Եւրոպայում խօլերան յայտնի եղաւ, իսկ Ռուսաստանում առաջին անգամ երևաց 1823 թուին: Այդ տարուայ յունիս ամսին նա երևաց Կովկասում, յետոյ, սեպտեմբերին, անցաւ Հաշտարխան, ուր և տեւեց մինչև նոյն տարուայ հոկտեմբերի 4-ը:

Երկրորդ անգամ խօլերան երևաց Ռուսաստանում 1829 թուականին: Բայց աւելի սաստիկ էր 1831 թուի խօլերան, երբ նորանով վարակուողների թիւը հասաւ 446,457-ի, իսկ մեռնողների թիւը—197,000-ի:

Մինչև 1838 թ. խօլերան համարեա ամենայն տարի երևան էր գալիս Ռուսաստանում, իսկ 1833 թուականին նորան միացաւ մի այլ չարիք—սով: Նոյնպէս 1847 և 1848 թուականներին սաստիկ խօլերա կար Ռուսաստանում:

Այսպէս ուրեմն՝ Ռուսաստանում խօլերան երեք շրջան ունեցաւ. առաջին շրջանը սկսեց 1823-ից և շարունակեց մինչև 1838 թ. երկրորդը—1847-ից մինչև 1859 թ., երրորդը 1865-ից մինչև 1873 թ.:

1831 և 1832 թուականներում խօլերան ամբողջ Եւրոպան անցաւ և հասաւ մինչև Ամերիկա և Ափրիկէ: 1883

Թուին նա երևաց Եգիպտոսում, իսկ 1884 թուի ամառը—  
Փրանսիայում և շատ սաստկացաւ Մարսէլ և Տուլոն քաղաք-  
ներում: Այդտեղերից էլ խօլերան անցաւ Իսպանիա և յետոյ  
Իտալիա, ուր այն աստիճանի սաստկացաւ, որ Նապոլիս  
քաղաքում օրական հազարից աւելի մարդ էր մեռնում:

## II.

### Ի՞նչ է խօլերան:

Ասիական, կամ աւելի ճիշտ, Հնդկաստանի խօլերան  
վարակիչ և համաճարակ հիւանդութիւն է, որ միշտ գոյու-  
թիւն չունի, այլ ժամանակ քառ ժամանակ երևան է գալիս  
որևէ երկրում, ուր և արագութեամբ տարածուելով՝ վա-  
րակում է առողջ մարդկանց մի որոշ մասը: Երբ մէկը վարա-  
կուեց, նորա սիրտը սկսում է յետ գալ, սկսում է առատ և  
ջրալի լուծողութիւն և անդամների սաստիկ կծկտում:

## III.

### Ի՞նչպէս պէտք է ստուգել խօլերայի գոյութիւնը:

Խօլերայով (ինչպէս և ամեն մի համաճարակ հիւան-  
դութիւնով, օրինակ՝ ծաղկով, տիֆով և այլն) վարակուելուց  
անմիջապէս յետոյ չէ երևում հիւանդութեան որևէ նշան:  
Յաճախ պատահում է, որ բոլորովին առողջ մարդիկ հեռա-  
նում են խօլերոտ տեղից և, առողջարար տեղ գնալով, այն-  
տեղ հիւանդանում են:

Սակայն՝ երբ մարդ արդէն վարակուեց, երբեմն զանազան  
նախանշաններ են երևում. օրինակ խօլերայի նախանշան լի-

նում է ստամոքսի գոգոնց և որովայնի լուծողութիւն (կկը-  
ղանքը սովորական գոյն և հոտ է ունենում). հիւանդը զգում է  
մի ընդհանուր թուլութիւն, յոգնածութիւն և գլխացաւ:

Նախանշաններից մի քանի ժամ, երբեմն էլ մի քանի  
օր յետոյ արդէն իսկական խօլերան է երևում հետևեալ  
ձևերով: Լուծողութիւնը շուտ շուտ է լինում (մի ժամում  
10—15 անգամ), առատ և ջրոտ կկղանքը անգոյն և առանց  
մի առանձին հոտի է լինում, նման եփած բրնձի ջրի պէս մի  
որևէ հեղուկի: Ստամոքսում դեռ ևս ցաւ և կծկտում չէ  
լինում: Դորանից յետոյ հիւանդը արագ սկսում է փխսել.  
բոլոր կերած ու խմածը յետ են գալիս. փեխսը թափվում է  
յանկարծակի և անգոյն հեղուկի նման է: Փեխսի չափը միշտ  
աւելի է լինում քան կերած ու խմածը: Հիւանդը զգում է  
ծարաւ, սրտնեղութիւն, ծանրութիւն սրտի մէջ և կրծքի  
գդալի տակ ցաւ: Սկսում է սաստիկ տապկտել, մի կողմից  
միւս կողմն ընկնել. մէզը կանգնում է և սկսում է կծկտումը  
(судороги) թնդողցներում, զարշապարներում և, երբեմն էլ,  
ձեռքերում և մարմնի այլ մասերում:

Կծկտումների ժամանակ ոտները կորանում են, նորանց  
մէջ սաստիկ ցաւ է զգացվում և այդպէս շարունակվում է,  
երբեմնապէս ընդհատուելով մի քանի րոպէ, որից յետոյ նո-  
րից աւելի ուժգին կրկնվում է կծկտումը: Այդ բոլորը հի-  
ւանդին վերջնականապէս թուլացնում է: Խօլերայի բռնելուց  
մի քանի ժամ յետոյ հիւանդի կաշու վրայ երևում է կպչուն  
քրտինք և նրա մարմինը սկսում է պաղել: Սկզբից սառ-  
չում են ձեռքերը, ոտներն ու երեսը և յետոյ ամբողջ մար-  
մինը կապտանում է: Սառած և կապտացած հիւանդը իւր  
ներս թափած երեսով, լղար դէմքով, սրացած քնթով  
փոս ընկած ու պղտորուած աչքերով աւելի կընմանէր դիակի,  
եթէ երբեմնապէս նորա ծամածռուած երեսի վրայ չ'երևէին

կծկտումից զգացած ցաւի նշաններ: Սակայն Հիւանդը իւր ուշքն ու միտքը, գիտակցութիւնը պահպանում է մինչև վերջը. նա ամեն բան հասկանում է, հարցերին պատասխան է տալիս, սակայն ակամայ, դանդաղ և գուլ ձայնով: Այդ բոլորը շարունակվում է 7-ից մինչև 24 ժամ: Եթէ դորանից յետոյ Հիւանդութիւնը չէ մեղմանում և կծկտումներն աւելի ուշ ուշ բռնում, Հիւանդը կորցնում է ուշքն ու միտքը, որի հետևանքը մեծաւ մասամբ մահ է լինում: Սովորաբար Հիւանդացածների կէսը մեռնում է. իսկ Մոսկվայում 1830 թուին մեռնողների թիւը կէսից էլ անցաւ:

Խօլերայից առողջանալը աւելի դանդաղ է ընթանում: Լուծողութիւնը և փեխսը հետզհետէ դադարում են, կկղանքը պնդանում, գունաւորում ու հոտ է ստանում, կծկտումները անհետանում են, մարմնի մէջ ջերմութիւնը վերականգնում է, մէզը նորից սկսում է գալ, Հիւանդի խորթակը և քունը նորից վերադառնում են: Առողջանալու ժամանակ Հիւանդները զգում են գլխի ծանրութիւն, ականջներում խժժոց: Շատ անգամ պատահում է, որ խօլերայից առողջացողները ստանում են յետխօլերային տիֆ (ПОСЛѢХОЛЕР-НБЫЙ ТИФЪ) անուանուած Հիւանդութիւնը. առաջ է գալիս խիստ գլխացաւ, տաքութիւն, զառանցում և քնկոտութիւն: Հիւանդը ենթարկւում է սաստիկ քնկոտութեան, նորա գիտակցութիւնը կորչում է և այդ տիֆը մեծաւ մասամբ վերջանում է մահով:

#### IV.

Ինչքից է առաջանում խօլերան, թնչ ախտածին իրեղէններ են մտնում մարդու մարմնի մէջ, որից ծագում է այդ սարսափելի Հիւանդութիւնը: Այժմս գիտութիւնը հաստա-

տում է, որ բոլոր վարակիչ Հիւանդութիւնների ժամանակ մարդու մարմնի մէջ մտնում են մանրագոյն արարածներ, որոնք սարսափելի արագութեամբ աճելով, բազմանում են և Հիւանդացնում մարմինը: Այդ մանրագոյն արարածներին զանազան անուաններ են տալիս. անուանում են նորանց միկրոբ, բակտերիա, բացիլ և այլն: Այդ Հիւանդութեան հրուշակաւոր հետազօտիչ բժիշկ Կօխը, ստուգելով այդ արարածների գոյութիւնը խօլերայով վարակուած Հիւանդների որովայնի և աղիքների մէջ, նորան անուանեց բացիլ:

Բացիլների յատկութիւնները հետևեալն են. նոքա ցրտի դիմանում են, միայն այդ ժամանակ չեն բազմանում. առանց օդի բացիլների աճիլն ընդհատում է. չորութիւնից և տաքութիւնից, օրինակ, եփելուց նոքա մեռնում են: Արովհետև խօլերայով հատ հատ Հիւանդանալը երբէք չէ ընդհատում Հնդկաստանում, ուստի այդ բացիլները կամ բակտերիաները այնտեղ միշտ գոյութիւն ունին: Միայն նոքա ժամանակ առ ժամանակ սկսում են խիստ աճել, որից որովայն է գալիս այնտեղ համաճարակութիւն, որ հեշտութեամբ անցնում է մեզ մօտ:

Մարդու մարմնի մէջ ընկնելով՝ բակտերիաները չափազանց արագ բազմանում են: Նոքա շատանում են աճելով, և ամեն մի աճած բակտերիան երկու կտոր է լինում, այդ երկուսը էլի երկուսի են բաժանւում և այդպէս շարունակւում է նոցա աճումը: Սակայն ի՞նչ ձևով այդ բակտերիաները ընկնում են մարդու մարմնի մէջ:

Փողովուրդը նկատում է, որ խօլերայի առաջին ծագման ժամանակ մի քանի աղբիւրների ջուրը գործածելուց մարդիկ Հիւանդանում են: Յետոյ, երբ սկսեցին այդպիսի աղբիւրների ջուրը հետազօտել. ստուգեցին որ ջրի մէջ կայ բազմաթիւ բակտերիա: Երբ խօլերան մեղմանում է, ջրի մէջ

էլ բակտերիան քչանում է. իսկ երբ նա բոլորովին ընդհատուում է, ջրի միջից էլ բակտերիաներն անհետանում են:

Այդ պատճառով հաստատուած է, որ բակտերիաները աճում են ջրի մէջ, և երբ մարդիկ խմում են այդ վարակուած ջուրը, բակտերիաները մտնում են նոցա մարմնի մէջ և աճելով հիւանդացնում են նորան: Իսկ ջրի մէջ հետեւեալ կերպով են ընկնում բակտերիաները:

Սովորաբար հիւանդի փեխսը և կկղանքը, որոնց մէջ անկասկած բակտերիա կայ, կամ արտաքնոց են թափում, կամ առհասարակ փողոց ածում: Բակտերիաները հեղուկ մասերի հետ ծորում են գետնի խորքը և ընկնելով գետնատակի ջրի մէջ, որից գոյանում է ջրհորների, աղբիւրների, գետերի և այլն ջուրը, վարակում են նոցա: Աւելի քիչ հաւանական է, որ օդի միջով տարածուի այդ վարակումը:

V.

Խնչն է նպաստում խօլերայի տարածման: Խօլերան ամենից առաջ տարածողները իրանք մարդիկ են: Երբ որևէ մի տեղում երևում է խօլերա, մարդոց վրայ սարսափ է ընկնում և ամենքը սկսում են փախչել վարակուած տեղերից, կարծելով թէ իրանք դեռ չեն վարակուած: Սակայն գալով չվարակուած տեղեր, այնտեղ հիւանդանում են և այդ ձևով տարածում վարակումը:

Խօլերայի տարածման պայմանների մասին զանազան կարծիքներ կան: Ոմանք ասում են, թէ նորա տարածուելը կախում ունի տեղից և երկրի հողի յատկութիւնից. այդ եզրակացնում են այն հիման վրայ, որ խօլերան, օրինակ նաւի մէջ չէ զարգանում, անգամ՝ եթէ նաւերի վրայ վարակուածներ են լինում: Պետենհորֆ բժիշկը մեծ նշանակութիւն է

տալիս այն հանգամանքին, որ Կօխը բացիլների գոյութիւնը ստուգել է հիւանդների աղիքների մէջ. ուստի նորա կարծիքով խօլերայի զարգացման պայմանները կախում ունին տեղից: Այդ պատճառով հարկաւոր է անմիջապէս ուշք դարձնել տեղի և բնակութեան մաքրութեան վրայ: Օրինակ՝ Անգլիայում երեսնական, քառասնական և յիսնական թուականներին խօլերան սաստիկ տարածուեց: Դորա դէմ նոքա մարտնչում էին ոչ թէ կարանտինով և քաղաքների շուրջը կապելով, այլ մաքուր ջուր բերելով և քաղաքները մաքրելով: Այդ պատճառով, երբ 60-ական թուականներին նորից խօլերան երևաց Անգլիայում, այդ անգամ աւելի մեղմ անցկացաւ, իսկ 70-թուականներին, երբ ամբողջ Եւրոպայում խօլերան սաստիկ տարածուեց, Անգլիայում միայն մի մի մարդիկ հիւանդացան, շնորհիւ երկրի լաւ առողջապահական պայմաններին, մինչդեռ Մարսէլում խօլերան սաստիկ տարածուեց քաղաքի ամենակեղտոտ թաղերում:

Փիրսովը կարծում է, որ խօլերան կարող է տարածուել ամեն մի երկրում և նորա տարածմանը շատ նպաստում են խօլերայից մեռնողների փտած մարմինները, նոյնպէս և հիւանդների բոլոր արտաթորութիւնները՝ կկղանքը և փեխսը: Տարուայ շոք եղանակներին դիակները աւելի արագ են փտում, և դորանով նպաստում խօլերայի տարածման. օրինակ Իտալիայից հաղորդում էին, «որ ազգաբնակութիւնը սկսում է աղբսել իրանց սրբերին, որ օգնեն, իսկ որևէ բժշկական միջոց մերժում է: Մերկատոյում դիակները մի քանի ժամ մնում էին աղքատ մարդկանց նեղ և սեղմուած բնակարաններում: Մեռածների ազգականները լաց ու կոծ են անում և նրանց մասնակցում են հարեւանները: Մեռածներին տան մէջ պահելով, առողջներն էլ իրանք վարակում են և նպաստում վարակիչ հիւանդութեան սարսափելի տարածման»:



Հիւանդանոցները արտաթորութիւնները ոչ միայն արտաքնոց էին թափում, այլ և ուղղակի փողոց էին դուրս ածում. ուստի օդի ազդեցութեան ենթարկելով՝ նոքա շուտով փտում էին և այդ փտած արտաթորութիւնների մէջ զարգանում էր բակտերիան:

Խօլերայով հիւանդացողների սպիտակեղէնը և ուրիշ իրեղէններ, որոնք աղտոտած են լինում փեխսով և այլ արտաթորութիւններով, մնում են շատ անգամ կեղտոտ, չլուացած և նոյնպէս տարածում են այդ հիւանդութիւնը: Լուացարարները, որոնք լուանում են այդ կեղտող սպիտակեղէնները, աւելի արագ վարակում են խօլերայով:

Խօլերայի տարածման նպաստում են նոյնպէս տարուայ եղանակները, գարունը, աշունը և ամառը: Երբ գալիս են ձմեռուայ ցրտերը, խօլերան դադարում է, բայց ոչ ընդ միշտ: Երբեմն գարնան գալուն նա նորից զարգանում է: Ամենախիստ համաճարակութիւնները լինում են ամառուայ շոքերին:

V I.

Ո՞վ է աւելի տրամադրուած խօլերայով հիւանդանալու:

Ամենայն հասակի մարդիկ տրամադիր են հիւանդանալու և տղամարդիկ նոյնքան, որքան և կանայք: Ծճկեր երեխանները շատ հազիւ են հիւանդանում խօլերայով: Սակայն 2—4 տարեկանների հիւանդանալը և մեռնելը խօլերայից շատ յաճախ է պատահում: Բայց ամենից շատ վարակում են խօլերայով ծաղիկ հասակի մարդիկ, այն է 20-ից մինչև 40

տարեկանները: Ծեր հասակում խօլերայով վարակուելը աւելի քիչ է պատահում. սակայն ծերերից շատ քչերը կարողանում են դիմանալ խօլերային: Յղի կանայք նոյնպէս տրամադիր են խօլերայով հիւանդանալու: Աւելի արագ հիւանդանում են գործարանների բանուորները, արհեստաւորները, որոնք ապրում են կեղտոտ, նեղ և խոնաւ ներքնայարկերում, ուր օդ և արև չեն ներս մտնում: Շատ անգամ խօլերան սաստիկ տարածուած է բանտերում, հիւանդանոցներում, անկեղանոցներում, զօրանոցներում և ուրիշ զանազան հասարակական բնակարաններում: Խօլերայի հիւանդութեան աւելի ենթարկում են այնպիսի մարդիկ, որոնք չափաւոր կեանք չեն վարում, հարբում են, ուշք չեն տանում, որ իրենց բնակարաններում մաքուր օդ լինի, մաքուր շորեր չեն հագնում. գործ են ածում այնպիսի ուտելիքներ, որոնք լուծողութիւն են պատճառում (օրինակ խիստ կանաչ պտուղներ և հատապտուղներ և այլն) և վերջապէս անզգուշութեամբ շուտ շուտ մրսում են: Թուլամորթները, կասկածոտ, վախկոտ մարդիկ վախի ազդեցութեան տակ հիւանդանում են և մեռնում խօլերայից: Յանկարծակի փոփոխելով իրենց սովորական կեանքը, դոքա խանգարում են իրենց առողջութիւնը և այդ ամենից աւելի շատ տրամադիր լինում խօլերայով հիւանդանալու: Այդ մասին մի տաճկական աւանդութիւն կայ:— Մի երիտասարդ թուրք ուրախ և անհոգ Զմիւռնիա է գնում: Յանկարծ ճանապարհին տեսնում է, որ նոյն ճանապարհով սուսուփուս գնում է մի սարսափելի հիւր— խօլերան. խեղճ տաճիկը վայր է թռչում ձիուց, ծնկաչոք է լինում խօլերայի առջև և աղաչում նորան, որ Զմիւռնիայում իրեն, իր ընտանիքին և բարեկամներին խնայէ: Խօլերայի մեղքը գալիս է և ասում է. մի վախենար, ես քեզ և ձերայնոց ձեռք չեմ տայ, միայն երկու հազար մարդ կը կո-

տորեմ: Այդ խօսքերից յետոյ խօլերան անհետանում է: Երբ տաճիկը գալիս է Զմիւռնիա, խօլերան այնտեղ արդէն տարածուած է լինում, ջարդում է մարդկանց և սարսափ գցում ամեն տեղ: Թուրքը հանգիստ ապրում է իրեն համար, համոզուած լինելով, որ ինքը և իւր բարեկամներն ու ազգականները կենդանի կը մնան: Միայն նա խիստ հետամուտ է լինում մեռնող մարդկանց թուին, հաւատացած լինելով, որ խօլերան միայն 2000 զոհ պիտի տանի: Սակայն նա զարմանքով նայում է, որ 5000 մարդ է մեռնում: Դու ինձ խաբեցիր, թշուառական խօլերա, մտածում է նա. սպասիր՝ դու մէկ իմ ձեռքս ընկի՛ր: Դորանից յետոյ շուտով խօլերան նորան կրկին հանդիպում է: Ստոր խաբեբայ, արհամարհանքով ասում է նորան թուրքը, ինձ խոստացար միայն 2000 մարդ տանել, իսկ տարար 5000: Սխալում ես, պատասխանում է խօլերան. ես ուղիղ 2000 տարայ, իսկ վերջը 2000-ին:

Կան մարդիկ, որոնք խօլերայի և ուրիշ վարակիչ ախտերի ժամանակ հիւանդների հետ մի ընակարանում են ապրում, միևնոյն կերակուրը գործածում, նոյն ջուրը խմում և նոյն օդը շնչում: Սակայն նոքա չեն հիւանդանում: Կասկած չկայ, որ վարակիչ արարածները ընկնում են գրեթէ ամեն մի անհատի մարմնի մէջ, սակայն հիւանդանում են մի քանիսը, կարծես թէ վերջինները մի առանձին տրամադրութիւն ունեն վարակելու: Թէ թնջ է այդ տրամադրութիւնը, յայտնի չէ և մինչև այսօր չէ հետազօտուած: Խօլերան կարող է մի քանի անգամ վերակրկնուել:

## VII.

### Խօլերայի բուժումը:

Շատ անգամ խօլերան այցելել է Եւրօպա և ամեն անգամ բազմաթիւ զոհեր է տարել: Նորան անխտիր զոհ են գնացել հարիւր հազարներով առողջ և աշխատաւոր մարդիկ, լինին դոքա մեծ ընտանիք հայրեր, որոնցից յետոյ նոցա գերդաստանը անապաստան և առանց պատառ հացի է մնում, կամ որդի, որ իւր ծերացած ծնողների միակ կերակրողն էր. մի խօսքով խօլերան ոչ ոքի չէ ջոկում և խնայում: Ամենքը զգում են, թէ ինչպիսի թշուառ հետեւանքներ է թողնում խօլերան և աշխատում են նրանից բուժուելու մի ճիշտ միջոց գտնեն: Սակայն ամենանշանաւոր բժիշկների ջանքը մինչև հիմա ապարդիւն է մնացել. թէպէտ շատ միջոցներ կան, սակայն մի հաստատ միջոց, երբ խօլերան արդէն տարածուած է, դեռ չեն գտել: Խօլերայի էութիւնն ուսումնասիրելով՝ վերջին ժամանակները ապացուցանում են, որ նորա ծագման նախապատճառները և նորա արագ տարածման պայմանները կարելի է ոչնչացնել, և, օգուտ քաղելով զիտութեան իմաստուն խորհուրդներից, հասարակութեան աջակցութեամբ և խելահաս կարգադրիչների շնորհիւ, եթէ անկարելի է բոլորովին խուսափուել խօլերայից, գոնեա հնարաւոր է խօլերայի առաջ գալուց յետոյ փոքրացնել վարակուածների թիւը: Ուրեմն խօլերայի բուժման խնդիրը երկու մասի պէտք է բաժանել. առաջին և ամենագլխաւոր խնդիրը թնջ միջոցներով պէտք է պահպանուել խօլերայով հիւանդանալուց, և երկրորդ՝ թնջ միջոցներ պէտք է գործ դնել խօլերայով հիւանդացած ժամանակ:

I.

Ի՞նչ միջոցներով հնարաւոր է պահպանուել խօլերայով հիւանդանալուց:

Որովհետեւ խօլերան վարակիչ հիւանդութիւն է, երբ նա մօտակայքում արդէն տարածուած է, պէտք է աշխատել ոչ մի յարաբերութիւն չունենալ այդ վարակուած տեղի հետ: Իտալիայում վերջին խօլերայի ժամանակ ժողովուրդը ոչ միայն ոչ մի յարաբերութիւն չէր ունենում վարակուած տեղերի հետ, այլ ինքը պահպաններ էր նշանակում և թոյլ չէր տալիս, որ վարակուած տեղերից եկողներն իրենց գիւղի կամ քաղաքի միջից անցնեն: Տօնավաճառների, ուխտադնացութեան, տօնակատարութիւնների և ուրիշ մարդաշատ ժողովների ժամանակ հազար ու մի կողմերից մարդիկ են գալիս ու հեշտութեամբ կարող են վարակուած տեղից եկածներ լինել. ուստի խօլերայի ժամանակ աւելի լաւ է տանը մնալ:


Խօլերայի երևան գալուց յետոյ հարկաւոր չէ բնակութեան տեղը փոխել, որովհետեւ ճանապարհին կարող են հիւանդանալ և ուտելիքի, խմիչքի ու հանգստութեան պակասութիւնից կարող են անօգնական մեռնել: Բացի այդ վարակուած տեղերից առողջարար տեղեր փոխուողները չպիտի էլևակայեն, որ նոքա խոյս տուին վտանգից. ընդհակառակն, նոքա անվտանգ տեղեր հասնելով, ոչ միայն իրենք կարող են հիւանդանալ, այլ և վարակել այդ տեղերը: Ուրեմն՝ խօլերայի երևալու ժամանակ չպէտք է վարակուած տեղերից փախչել անվտանգ տեղ, և այդպիսով պատճառ դառնալ հիւանդութեան տարածման: Սակայն եթէ այնուամենայնիւ հարկաւոր լինի վարակուած երկրից տեղա-

փոխուել, այն ժամանակ իսկոյն պէտք է իմաց տալ իշխանութեանը: Այդ պահանջում են թէ իւր և թէ հասարակութեան ապահովութիւնը: Փարիզի բժշկական ճեմարանը այդ մասին հետևեալ վճիռը հրատարակել է: Երկաթուղու կայարանում պէտք է հիմնել բժշկական դիտարաններ, որ հիւանդացած ճանապարհորդները ջոկուեն առողջներից և հիւանդներին իսկոյն օգնութիւն հասցնեն:

Խօլերայի երևան գալու ժամանակ պէտք է ամենամեծ ուշադրութիւն դարձնել, որ փողոցները, բակերը, տները որքան կարելի է մաքուր լինեն: Բոլոր կեղտերը, աղբը, արտաքնոցների աղտեղութիւնները, կեղտոտ ջրերի հորերը և առհասարակ այն ամենը, ինչ որ հեշտութեամբ փտում է և գարշահոտութիւն տարածում, պէտք է իսկոյն հեռացնել, որովհետեւ կեղտը, աղտեղութիւնները, աղբը բարեպատեհ պայմաններ են այն ամենամանրիկ կենդանիների (բակտերիաների) աճման, որոնք աւելի շատ փտեցնում են և գարշահոտութիւն տարածում:

Օրինակ, բժիշկներն ապացուցանում են, որ Մարսէլում խօլերան սաստկացաւ մարմնեղէն իրերի փտելուց և արտաթորութիւններից, որոնց ոչով չէր ցանկանում մաքրել:

Բժիշկ Օնիմուսը, նկատելով, որ քաղաքի շրջակայքում բանուորներն անգամ շատ հազիւ վարակուած են, գալիս է այն եզրակացութեանը, որ քաղաքներում, եթէ իշխանութիւնն ու ազգաբնակչութիւնը համերաշխութեամբ հսկեն հասարակական առողջութեան վրայ, միշտ օրինակելի մաքրութիւն պահպանեն ամեն տեղ, նոքա անվտանգ կարող են համարել իրենց: Պէտք է նոյնպէս հսկողութիւն ունենալ ջրի մաքրութեան վրայ, որովհետեւ ջրհորներում շատ անգամ անձրևի կամ գարնան ջրի հետ ծորում է և աղբը, կամ ուրիշ զանազան իրեղէններ, որոնք ջրի մէջ փտում են և ջուրը



1003  
10206

վարակում: Առհասարակ պէտք է մաքրել բոլոր այն աղբիւրները, որտեղից ջուր են տանում գործածելու համար:

Մեծ քաղաքներում փողոցները սովորաբար ջրում են, քայց դա անյարմար է խօլերայի ժամանակ, որովհետև նախ՝ գետնի թրջուկը աւելի նպաստում է իրեղէնների փտելուն, և երկրորդ՝ շատ անգամ հոտած և ապականուած ջրեր են գործածում փողոցները ջրելու համար: Երբ մի տեղ երևաց խօլերան, ամեն մարդ իւր մասին պէտք է հոգս տանի, որ չը վարակուի և չը վարակէ ուրիշներին: Ուստի չպէտք է վտանգի ժամանակ և վախի աղղեցութեան տակ թողնել բնակութեան տեղը, ինչպէս վերեն ասացինք, այլ պէտք է մնալ նոյն տեղում և գործադրել հետևեալ նախազգուշացնող միջոցները: Պէտք է մաքուր պահել բնակարանը և բոլոր տնային իրեղէնները, նոյնպէս և բակերը, տները, արտաքնոցները, աղտոտ ջրերի փոսերը և այլն: Արտաքնոցները և աղբանոցները պէտք է սրսկել այնպիսի հեղուկներով, որոնք ոչնչացնում են վարակիչ կենդանիներին, բակտերիաներին, կամ դիմադրում են վարակման տարածմանը: Բայց ամենից օգտակարն է շուտ շուտ մաքրել նրանց, որ աղտեղութիւններով չը լցուեն: Տաք և պարզ եղանակներին հարկաւոր է պատուհանները և դռները բանալ օդամաքրութեան և բնակարանների չորութեան համար: Կեղտոտ ջրերը, աղբը, և առհասարակ ամեն տեսակ աղտեղութիւններ ջրէտք է փողոց ածել, այլ պէտք է արտաքնոց կամ նոցա համար շինած անցքերը լցնել:

Նոյնպէս մեծ ուշք պէտք է դարձնել շորերի և սպիտակեղէնի մաքրութեան վրայ: Ամառուայ շոքերին պէտք է այնպիսի շորեր հագնել, որ կարելի է շուտ շուտ լուանալ: Ամառը անկարելի է, ինչպէս այդ շատ անգամ անում են գիւղացիները, տաք մուշտակներ, կամ մորթուց կարած շորեր

հագնել: Սպիտակեղէնը հարկաւոր է շուտ շուտ փոխել և կեղտոտ շորերը երկար ժամանակ չպահել, այլ խնդոյն լուանալ:

Կերակուրի վերաբերմամբ պէտք է հետևեալ նախազգուշութիւնները գործ դնել: Չպէտք է հում ջուր խմել, նրանով չպէտք է աման լուանալ, այլ պէտք է միայն եփած ջուր գործածել, որովհետև խօլերայի բնածինները ջուրը եփելու ժամանակ ոչնչանում են:

Ոչ մի խմիչք չպէտք է գործ ածել, որ հում ջրից է պատրաստուում: Մի անգամից չպէտք է շատ ջուր խմել, մանաւանդ քրտնած և տաքացած ժամանակ: Սառը ջուր նոյնպէս չպէտք է խմել, որ մի դուրեց ստամոքսը մրսի: Գարեջրի և օղու սովոր մարդիկ պէտք է չափաւոր գործ ածեն: Սակայն հարբելը և խնձոյքներ սարքելը միանգամայն վնասակար են: Պէտք է նկատել որ առաջ խօլերայից պաշտպանուելու համար շատ օղի էին գործածում, շատ անգամ էլ պղպեղը հետը. սակայն չափից դուրս գործածելուց կարելի է աւելի շուտ հիւանդանալ խօլերայով, քան թէ պահպանուել նորանից: Կերակուրը պէտք է լինի մսեղէն և կաթնեղէն, թարմ, սննդարար և բաւականաչափ: Աւելի լաւ է քիչ քիչ և մի քանի անգամ ուտել, քան երկար ծոմ պահել և յետոյ մէկից ծանրաբեռնել ստամոքսը:

Տնից չպէտք է քաղցած դուրս գնալ, այլ կշտացած: Վնասակար է այնպիսի կերակուր գործածել՝ որ լուծողութիւն է տալիս. ուստի պէտք չէ իւզոտ, հում կամ կիսաեփ և սառը կերակուր ուտել:

Նոյնպէս պէտք է խուսափել ծարաւեցնող կերակուրներից, օր. երշիկից, խոզապուխտից, աղած ձուկից, սնկերից և այլն:

Պէտք է աշխատել, որքան հնարաւոր է, քիչ գործածել սոխ, խիար, բոզկ և ուրիշ հում բանջարեղէն և բոլորովին

չպէտք է ուտել չհասած միրգ, կամ հատապտուղ: Կաթ գործածել կարելի է առանց վախի, լինի դա հում թէ եփած: Սակայն թթուած կաթից և թթուած սերուցքից պէտք է հեռու մնալ: Ծանր աշխատութիւնը առանց հանգստանալու, անքուն գիշերներն ու անառակութիւնը, վախն ու անհանգստութիւնը ուժասպառ են անում մարդուն ու թուլացնում, իսկ թուլ և ուժասպառ մարդիկ աւելի տրամադիր են խօլերայով վարակուելու: Պէտք է նոյնպէս զգոյշ լինել մրսելուց. հազուստը տարուայ եղանակներին համեմատ պիտի լինի. փորը և ոտները տաք պէտք է պահել (օգտակար է մի տաք փորկապ ունենալ), չպէտք է քնել խոնաւ գետնի վրայ, չպէտք է լողանալ ցուրտ օրերում, կամ վաղ առաւօտ և երեկոյ:

Այդ բոլոր խորհուրդները քիչ շատ կարողաւորների համար են անշուշտ. սակայն կան չքաւոր ընտանիքներ, որոնք ուրախութեամբ այդ ամենը կանէին, բայց զուրկ լինելով լաւ բնակարան, թարմ կերակուր և յարմար շորեղէն ունենալուց, ամենից շատ ենթակայ են լինում հիւանդութեան և դորանով ակամայ տարածում են վարակումը հարուստների մէջ: Ուստի նոցա վրայ հարուստները պէտք է ուշք դարձնեն թէ իրենց սեպհական ապահովութեան համար և թէ մարդասիրական զգացմունքից զրգուած. նոքա պարտաւոր են խօլերայի ժամանակ օգնել չքաւորներին, ով որքան և ինչով կարող է: Այս դէպքում ամեն մի տուրք շնորհակալութեամբ կընդունուէր և պարգևատուները օգուտ արած կը լինէին թէ խեղճերին, թէ հասարակութեան և թէ ազգին:

Կանայք Ֆրանսիայում վերջին խօլերայի ժամանակ շատ զէպքերում կատարեալ հերոսական դեր կատարեցին. հասարակութիւնը զարմացմամբ վկայում էր անձնագոհ զործու-

նէութիւնը կոյսերի, որոնք հիւանդանոցներում շահում էին հիւանդներին:

Մարսէլում և Տուլոնում ութը գլխութեան քոյրեր զոհ գնացին խօլերային: Սակայն աշխարհական կանայք նոցանից յետ չմնացին այդ բարեգործութեան ասպարիզում: Տուլոնում մի ուսումնարանի տեսչուհի, օրիորդ Աստօ, խօլերայի սկզբից մի հիւանդանոց բացեց և իւր մօր հետ միասին շահում էր հիւանդներին: Մայրը շուտով խօլերայից մեռաւ և ինքն էլ թեթեւ վարակուեց: Կլովիս Հիւզ յայտնի երէցփոխանի կինը իւր ամուսնուն հետեւեց Մարսէլ և սկսեց այցելել աղքատներին, շահել հիւանդներին և ոչ մի վտանգից չէր վախենում իրան համար այդ սուրբ պաշտօնը կատարելու:

Այդպէս ուրեմն՝ բարեգործութիւնը խօլերայի ժամանակ ոչ միայն նիւթական օժանդակութեամբ պէտք է լինի, այլ և հիւանդներին կամաւոր հսկողութեամբ: Դա մի առանձին վտանգ չէ սպառնում, սրովհետեւ խօլերան չէ քաշում հիւանդից առողջի վրայ. դորան ապացոյց, որ բժիշկներն ամբողջ գիշերներ մնալով հիւանդների կշտին, շատ անգամ նեղ ու արտաթորութիւններով ապականուած սենեակներում, չեն վարակուում, որովհետեւ վարակումը հիւանդներից չէ փոխուում, այլ նոցա արտաթորութիւններից և փեխսից: Հիւանդի կկղանքից և փեխսից իսկոյն չէ կարելի վարակուել, այլ երբ նոքա 16—17 ժամ մարմնից դուրս գալուց յետոյ ենթարկուում են մի ինչ որ առայժմս մեղ անյայտ փոփոխութեան, որի համար նոքա բարեպատեհ պայման են գտնում, այսինքն՝ երբ փոքրիկ արարածները, բակտերիաները, զարգանում են: Իսկ այդ պատահում է, ինչպէս ասացինք վերևը, երբ նոքա թափուում են կեղտոտած, աղբոտ և հոտած իրեղէնների վրայ: Խօլերայի ժամանակ պէտք է միջոցներ գործ դնել վարակման տարածուելու առաջն առնելու համար: Որովհետեւ վարա-

կուճը տարածուում է կկղանքի, փխսածի և դոցանով կեղտոտած իրեղէնների, սպիտակեղէնի և հագուստի միջոցով, ուստի այդ բոլորը կամ պէտք է իսկոյն ոչնչացնել, կամ մաքրել անվնասացնող միջոցներով: Այդ միջոցներից մի քանիսը սոքա են: Կարբոլեան թթուատ, ծծումբ և ծծմբաթթու, կիր, կուպր (ղաթրան—деготь), քացախ, սկիպիտար, երկաթէ արճասպ (ղաճ), խլորակիր (хлорная изв.) խլորաջուր, նոյնպէս և բարձր տաքութիւն: Մինչեւ բժշկի գալը հիւանդը պէտք է անկողնի մէջ պառկի և յարմարութեան համար նորա տակը պէտք է փռել մոմլաթ (կլեօնկա) կամ իւղած թուղթ. այդպիսով սպիտակեղէնը և տեղաշորը կարող են չկեղտոտուել կկղանքից և փեխսից: Մոմլաթի և թղթի տեղ կարելի է յարդ լցնել. միայն հարկաւոր է շուտ շուտ փոխել, իսկ աղտոտած յարդը իսկոյն վառել: Սենեակից բոլոր աւելորդ իրեղէնները պէտք է դուրս տանել: Սենեակի օդը պէտք է միշտ մաքրել, տաքացրած աղիւսի վրայ քացախ ածելով:

Սենեակի յատակը, պատերը և կարասիքը պէտք է սրսկել կարբոլեան թթուատի (մի մսխալ մի ֆունտ ջրի հետ), կամ սկիպիտարի ջրով: Սկիպիտարի ջուրը պատրաստուում են հետեւեալ ձևով. մի մեծ շիշի մէջ ածում են երկու մասը ջուր և մի մասը սկիպիտար, խառնում են և շիշը դնում արևի դէմ: Հետզհետէ շիշից ջուր են առնում և նորից անապակ ջուր լցնում ու կրկին արևի դէմ դնում: Հիւանդի մահճակալի տակ և սենեակի այլ տեղերում պէտք է դնել ափսէների մէջ ածած կարբոլեան թթուատի ջուր:

Արտաթորութիւններով կեղտոտուած բոլոր իրեղէնները՝ ամանեղէն, կարասիք և այլն անմիջապէս, եթէ հնարաւոր է, պէտք է ոչնչացնել (օրինակ այրել) կամ մաքրել (օրինակ եփ ջրով լուանալ, կամ եփ եկող ջրի մէջ ընկլմել): Արտաթորութիւնների ամանների մէջ պէտք է կարբոլեան թթուատ,

կամ կուպր ածել: Բոլոր արտաթորութիւնները պէտք է մի տեղ լցնել և վրան ածել կարբոլեան թթուատ, կամ կուպր, կամ կիր ցանել և ծածկել նորան փայտի թեփով: Յետոյ այդ բոլորը պէտք է խարոյկի մէջ վառել, կամ արտաքնոց լցնել, որ շուտ շուտ պէտք է մաքրել. այդտեղ էլ պէտք է ածել երկաթէ արջասպի ջուր (15—20 ֆունտ մի վեդրօ ջրի մէջ), ծծմբի կամ կարբոլեան թթուատի ջուր (1 ֆունտ 20 ֆ. ջրի հետ) և ծածկել մարած կրով: Արտաքնոցների պատերին պէտք է կուպր քսել: Խօլերայով հիւանդացածների բնակարանը գոնէ 14 օր առանց բնակիչների պիտի մնայ և այդ ժամանակ արջասպ ծխելով շուտ շուտ պէտք է լուանալ և մաքրել:

Արջասպը հալեցնում են և նորա մէջ ընկղմում կտորներ, կամ քրքայ (корпия), որոնց յետոյ վառում են:

Չպէտք է այդ հիւանդների մահճակալները, շորերը, սպիտակեղէնը և կահ կարասիքն և այլն գնել:

Ինչո՞վ են բուժուում խօլերայից: Մինչև այսօր խօլերայից աւողջանալու ոչ մի ճիշտ միջոց չեն գտել. ուստի երբէք չպէտք է գործ ածել դանազան գաղտնի միջոցներ, որ ռամիկները, կամ ինքնուս դայիակները գովում գովաբանում են: Խօլերայի լուծողութեան դէմ նոյն միջոցները պէտք է գործ դնել, որ գործ են ածում սովորական լուծողութեան դէմ, աֆիօն (опиумъ): Որովհետև դեղատոններից առանց բժշկի դեղատոմսի աֆիօն չեն ծախում, ուստի հարկաւոր է նախապէս բժշկի միջնորդութեամբ ձեռք բերել աֆիօնի թրը-ջոցը (настойка), որին կարելի է կիսով չափ խառնել կատուախոտի (վալերիանի), կամ անանուխի (դադձի) կաթիլներ: Աֆիօնի անապակ թրջոցից մեծերին Կարելի է 5 կաթիլ տալ, իսկ կատուախոտի, կամ անանուխի կաթիլների հետ միասին երկու ժամը մի անգամ պէտք է տալ 10—15


կաթիլ մի փայտէ գրալ ջրով: Լուծողութեան ժամանակ օգտակար է տալ հիւանդին ինօզեմցովի կաթիլներ 25-ական կաթիլ ամեն մի ժամում: Լուծողութեան դէմ նոյնպէս պէտք է գործածել կապոզ միջոցներ՝ շիբ (արդն), տանին (1—3 գրան ամեն անգամ), նոյնպէս կաղնու կեղեի կամ բրնձի եփած ջուր: Խմելու համար պէտք է գործածել անանուխի, կամ լուի ծաղիկի (րամաշկա) թէյ: Նոյնպէս օգտակար է հետեւեալ արտաքին միջոցները գործ դնել. փորի վրայ կաղիւ տաք անձեռնոցներ, տաք մսխեր, կամ թեփ, կամ մանանեխի սպեղանի: 1846 թուին, երբ Կովկասում խօլերա կար, մի բժիշկ սպիտակ նաֆթ էր գործածում: «Սպիտակ և ծորած նաֆթը — ասում է այդ բժիշկը — 6-ից մինչև 12 և 15 կաթիլ օդու, ջրի կամ անուշահոտ խոտերի օշարակի հետ անմիջապէս կանգնեցնում է խօլերայի լուծողութիւնը: Երբ խօլերան դեռ բոլորովին չէր արտայայտուել, ես տալիս էի նաֆթ և 12-ից աւելի մարդիկ այնքան հեշտութեամբ դիմացան խօլերային, որ ոմանք առողջացան, իսկ մնացեալներն լոյս կալ, որ շուտով բոլորովին առողջանան»: Մի այլ բժիշկ, լեռնային նաֆթ քսելով, ոչնչացնում էր հիւանդի մարմնի սարսուռը և կծկումը:

Երբ խօլերան բոլորովին դարդացած է, այսինքն շուտ շուտ լուծողութիւնը և փեխսը սկսուեց, այն ժամանակ ոչ մի դեղ չի օգնիլ, սրովհետև բոլոր ընդունուած դեղերն դուրս են վիժվում: Փխտելու ժամանակ կարելի է կաղնի մեծութեան սառուցի կտորներ տալ, կամ սօդայի և սելտերի ջուր քիչ քիչ խմացնել: Ծարաւը յաղեցնելու համար պէտք է դինի և սառուց տալ: Կծկումների և անդամների պաղելու ժամանակ պէտք է որևէ բրդէ կտորով տրորել ոտները, քափուրու կամ մանանեխի սպիրտ քսել, տաք ջրով կծուծներ կամ շիշեր դնել փորին: Ահա և մի հասարակ միջոց: Պէտք է

գործածել կանեփի իւղի հետ կիսով չափ խառնուած մաքուր կուպր: Նայելով հոսակին կէս քմպանակից մինչև մի բաժակ պէտք է ընդունել: Երբ խօլերան արդէն դարդացած է, այդ խառնուրդը հիւանդին խմացնելուց յետոյ պէտք է նորա մարմնին քսել պղպեղով օղի, կամ մի այլ այրող հեղուկ. փորի վրայ պէտք է կոպել մանանեխի սպեղանի. պէտք է խմել նոր կլիստ կաթ, կամ՝ եթէ այդ չկայ, եփած եղկումեղկ ջուր և կամ նուշի կաթ: Սառը ջուր կամ մի այլ խմիչք խմելը միանգամայն արգելուում է: Խօլերայով հիւանդացողները սաստիկ ծարաւ են ունենում, սակայն սառը խմիչք խմելը միանգամայն մահ է հիւանդի համար. շատ անգամ ըոպէսբար կարող է սպանել հիւանդին և երբէք առանց վատ հետեւանքի չէ անցնում: Այդ դեղի ներգործութիւնը հետեւեալն է. գրեթէ ըոպէսբար ընդհատուում է փեխսը, մարմինը ջերմանում է, տաք ու առատ քրտինք է տալիս և խորը քուն: Լուծողութիւնը քիչ քիչ նուազում է: Կծկումները նոյնպէս շուտով անհետանում են: Այդպիսով կարելի է երկու, երեք օրուայ մէջ խօլերան ոչնչացնել:

Վ Ե Ր Ջ







2968

2013

Հայաստանի Ազգային գրադարան



NL0435484

IV Բ

